
ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԻ ՆՎԻՐՅԱԼԸ
(Բանագետ Ալվարո Ղազիյանը 85 տարեկան է)

Գլոբալացման հողմապտույտն իր գալարների մեջ է առել ողջ մարդկությանը ու համահարթեցման մամլիչին հանձնել ազգերի ու ժողովուրդների մշակութային կյանքը՝ կենցաղից մինչև քաղաքական վարք, մտակեցվածքից մինչև պատմական հիշողություն: Ազգերը տարբեր ձևով են դիմակայում դրան՝ փորձելով կյանքի խելակորույս վազքում պաշտպանել իրենց ԵՄ-ը նրա կորստին համակերպվող քաղքենիական անտարբերությունից ու օտարածին նորաձևություններից:



Դիմակայելու համընդհանուր դեղատոմս կամ ծրագիր չկա: Մակայն հնարավոր ծրագրերում, ինչպես հաստատում է փորձը, կա ազգային ինքնության ակունքներին վերադառնալու անվերապահ պայման, որ նաև մեզ է վերաբերում: Ժամանակների հեռուներից եկող մեր առասպելները, դյուցազնավեպերը, ասքերն ու հեքիաթները, ճաշատեսակներն ու տարազները, ժողովրդական երգուպարը, սովորույթներն ու ծեսերը և, իհարկե, լեզուն իր բարբառներով՝ դրանցից է ձևավորվում մեր ինքնության մատրիցան՝ նրա հիմնակաղապար: Քաղաքական, տնտեսական ու հոգևոր փոխակերպումների ահագնացող քամին ամեն օր է փորձում մեզնից խլել մեր ինքնության նշաններն ու նետել մոռացության գետը: Դա նշանակում է, որ դրանց պաշտպանության ու պահպանության համար պայքարը ամեն օր պիտի մղվի, պայքար, որի առաջին բնագծում իրենց ժամանակին հերթապահել են Խորենացին, Կոմիտասը, Սրվանձտյանը... Պատմության մեծ պաստառի վրա է երևում այն գործի մեծությունը, որ արել են նրանք՝ կորստից փրկելով արժեքներ, որոնցով մենք այսօր աշխարհին ներկայանում ենք որպես հայ...

Այդ գործը սակայն դադար չի հանդուրժում: Հայաստանի երկրորդ հանարպետության պետական ու գիտական այրերը մեր ինքնությանը սպառնացող վտանգների գիտակցումով են նպաստել, որ դեռևս 1925 թ. հիմնվի Հայաստանի կենտրոնական գավառագիտական բյուրոն, իսկ 1959 թ. ակադեմիական համակարգում հիմնվի Հնագիտության և ազգագրության ինստիտուտը, որ-

տեղ կենտրոնացվեց այդ ուղղությամբ տարվող աշխատանքների ստվար մասը: Թվում է՝ կառույցը կա, և միայն նրա ներկայությունը բավարար է ապահովելու համար առաջադրված նպատակի իրագործումը: Մակայն պարզվում է, որ դա սոսկ ակադեմիական գործ չէ: Պարզվում է, որ ինչպես առաջներում, այնպես էլ այսօր այն պահանջում է անվերապահ նվիրվածություն, անձնանվեր հավատարմություն ազգային ինքնության պաշտպանի առաքելությանը:

Բանագիտության՝ որպես հայագիտության կարևոր ճյուղերից մեկի պատմությունն այսօր իսկ դժվար է պատկերացնել առանց վերջերս իր 85-ը բոլորած ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական տեքստաբանության բաժնի վարիչ Ալվարդ Ղազիյանի ավանդի: Բայց նախ իր մասին: Զարմանալիորեն համահունչ են նրա մասնագիտական ու գիտական կենսագրությունները: Ծնվել է 1930 թ. Արցախից ՀԽՍՀ Իջևանի շրջան տեղափոխված Սարուխանի և Լուսիկի ընտանիքում, որը 1933 թ. տեղափոխվում է Գանձակ (Կիրովաբադ): Այդտեղ էլ նա 1947 թ. մեղալով ավարտում է թիվ 10 հայկական միջնակարգ դպրոցը և ընդունվում ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի հայ բանասիրության բաժինը: Ավա դ, համակուրսեցիների հետ բուհն ավարտել չի հաջողվում: 1949 թ. Սարուխանի Ղազարյանի ընտանիքն արտրվում է Ալթայի երկրամաս: Հայրը, որ բնատուր առաքինություններով օժտված մտավորական էր, իր երեխաներին պիտի բացատրեր, թե ինչի մասին չի կարելի դրսում խոսել և ինչի մասին կարելի է խոսել միայն տանը՝ օտար աչքուականջից հեռու: Ստալինյան բռնապետության տարիներին ընտանիքի բոլոր անդամները քաղաքական հասունության դասեր էին յուրացնում ու սպասում... Արդարությունը վերականգնվեց միայն 1953-ին: Վերադառնալով Երևան 1956-ին՝ Ա. Ղազիյանը շարունակում է ընդհատված ուսումը և 1960 թ. գերազանցության դիպլոմով ավարտում համալսարանը:

1961-ին նա աշխատանքի է ընդունվում ՀԽՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում, որտեղ և ահա 55 տարի անընդմեջ աշխատում է:

Ա. Ղազիյանը բանագիտական գործունեությունն սկսել է բանահավաքչությունից, մի գործը, որը հարատևում է մինչև մեր օրերը: Բանահավաքչական աշխատանքները նա իրականացնում էր Արցախում, մի հանգամանք, որին նպաստում էր ընտանիքի արցախյան ծագումն ու այնտեղ պահպանված հայրական տան գոյությունը: Մակայն չմոռանանք, որ ինչ վարչական ու քաղաքական խոչընդոտներ էին հարուցվում Արցախի մշակույթով զբաղվողների առաջ XX դ. 60-ականներին: Ա. Ղազիյանի գրառած բանահյուսական ձեռագիր ժառանգությունը պահվում է Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվում: 1983 թ. հավաքած բանահյուսական տարբեր ժանրերի

նմուշներից կազմել և հրատարակել է «Հայ ազգագրություն և բանահյուսություն» մատենաշարի 15-րդ պրակը՝ «Արցախ»: Նրա հավաքածուի նյութերն օգտագործվում են բանագիտական հետազոտություններում և ժանրային համահավաք ժողովածուներում:

Բանագետ Ա. Ղազիյանի ուսումնասիրությունները խմբավորվում են հետազոտական մի քանի թեմաների շուրջ:

Առաջինը ժողովրդական բանահյուսությունն է, որ ազգային աշխարհընկալման, բարու ու չարի, կյանքի իմաստի մասին ժողովրդական պատկերացումների անխարդախ հայելին է: Այդ թեմատիկ խմբում առանձնանում են հայ ժողովրդական հեքիաթներին նվիրված աշխատությունները: Նշանակալից է դրանց գիտական հրատարակության, պուբլիկացիայի տիպաբանության վերհանման, դրանցում օգտագործված բարբառային բառերի ու արտահայտությունների բացատրության գործում բանագետի ավանդը: Նա կազմել և համապատասխան առաջաբաններով ու ծանոթագրություններով հրատարակել է «Հայ ժողովրդական հեքիաթներ» գիտական հրատարակության 13-րդ (Մուշ-Տարոն, 1985 թ.), 14-րդ (Վասպուրական, 1999 թ.) և 16-րդ (Վան, Խլաթ և այլն, 2009 թ.) հատորները: 2004-ին Ս. Վարդանյանի համահեղինակությամբ հրատարակվել է նրա կազմած «Բաքվի հայոց բանահյուսությունը» ժողովածուն, որ բացառիկ գործ է մեր ժողովրդի այդ հատվածի նկարագրի մասին պատկերացում կազմելու համար: Ծավալուն այդ գործերից բացի Ա. Ղազիյանը հայ բանահյուսությանը նվիրված տասնյակ հոդվածներ է հրատարակել, որոնցում դիտարկված են ազգային սովորույթների, ավանդույթների արտացոլումները ժողովրդական բանարվեստում: Այդ աշխատանքներում առանձնանում են «Պարույր Սևակի «Անլռելի զանգակատան բանահյուսական հենքը», (1973 թ.) և «Հ. Սահյանի քնարերգության ժողովրդական ակունքները» հոդվածները (2005 թ.):

Ա. Ղազիյանը նշանակալից վաստակ ունի հայ ժողովրդական ռազմի և զինվորի երգերի հավաքման, հրատարակման ու ուսումնասիրման գործում: 1971 թ. նա հաջողությամբ պաշտպանել է վերոհիշյալ թեման՝ իբրև թեկնածուական թեզ: Համահավաք բնագրերն ուսումնասիրությամբ հանդերձ 1989 թ. լույս է տեսել «Հայ ժողովրդական ռազմի զինվորի երգեր» խորագրով ժողովածուն (391 էջ), որի տպագրությունն, ի դեպ, չէր իրականացվում քաղաքական անբարենպաստ պայմանների պատճառով:

«Ռազմի և զինվորի երգեր» թեմային տրամաբանորեն առնչվում, շարունակություն է կազմում հայ ազգային մշակույթի ու պատմության անբաժան օղակը հանդիսացող ռազմական նշանավոր գործիչներ, գորավարներ Վ. Մադաթովի, Մ. Լորիս-Մելիքովի, Հ. Լազարյանի, ծովակալներ Լ. Սերեբրյակովի ու

Հ. Իսակովի և այլոց նվիրված, ինչպես նաև ազատագրական պայքարի նշանավոր հերոսների կյանքն ու գործունեությունը ներկայացնող հողվածաշարի հրատարակումը:

Երրորդ մեծ թեման, որի շուրջ խմբավորվում են բանագետի ուսումնասիրությունները, պատմագիտական մեծ արժեք ներկայացնող ձեռագրերի, փաստաթղթերի ու վավերագրերի ուսումնասիրությունն ու հրատարակումն է: Դրանց մի մասը զետեղված է 1999 և 2001 թթ. Ա. Քալանթարյանի համահեղինակությամբ կազմած թիվ 1 և 2 «Վավերագրերում»: Բացառիկ արժեք ունի Ս. Միրզոյանի հետ Ա. Ղազիյանի կազմած «Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918–1920 թթ.» արխիվային փաստաթղթերի, վավերագրերի ու նյութերի ժողովածուն (2003 թ., 523 էջ):

Թվարկված աշխատություններն իսկ թույլ են տալիս Ա. Ղազիյանի հետազոտական գործունեության մեջ առանձնացնել գլխավոր թեման: Խոսքը Արցախի ու արցախյան հիմնախնդրի մասին է: Այդ շարքում առանձնանում է Կ. Ղահրամանյանի հետ գրած «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետականության ակունքները» գիրքը (2008 թ.), որ աչքի է ընկնում մեր օրերում քաղաքական հրատապություն ունեցող հարցադրումներով ու փաստարկներով: Քաղաքական նույն ճշգրիտ շեշտադրումներով են գրված այդ թեմայով նրա «Զեկույցներ Անդրկովկասի նահանգների սահմանների մասին» (1993 թ.) և «Անդրկովկասի ներքին վարչական սահմանների փոփոխումը» (2000 թ., ռուսերեն) հողվածները: Ուշագրավ է Ա. Կիսիբեկյանի երկհատոր «Հուշերի» խմբագրումն ու հրատարակումը (2011 թ., 519 և 606 էջ), որը կարևոր և արժանահավատ սկզբնաղբյուր է Արցախի նոր պատմության համար:

Հայ բանահյուսության հետազոտության բնագավառում Ա. Ղազիյանը հանդես է եկել ոչ միան որպես բանահավաք ու հրատարակիչ, այլև որպես բանագիտական-բանահյուսական աշխատությունների խմբագիր, և նրա այդ կարգի աշխատանքները ներկայանում են առանձին փաթեթով: Նա խմբագրել է «Հայ ազգագրություն և բանահյուսություն, Նյութեր և ուսումնասիրություններ» մատենաշարի պրակ 11, Գ. Միքայելյանի «Նոր-Բայազետի ազգագրություն և բանահյուսություն» ժողովածուն (1980 թ.), Լ. Հարությունյանի «Նշխարներ Արցախի բանահյուսության» (1991 թ.), Կ. Ղահրամանյանի «Օջախի գիրքը» (2002 թ.) գրքերը: Նա է կազմել հայագիտության մեծերից մեկի՝ Գարեգին Մրվանձտյանի երկերի առաջին հատորը (1978 թ.), որն ընդգրկում է «Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ», «Մանանա», «Համով-հոտով» աշխատությունները, նաև Հ. Հովսեփյանի «Ղարաղաղի հայերը» գրքի երկրորդ (բանահյուսություն) հատորը (2009 թ.):

Վերջապես, արդարացի չի լինի, եթե անտեսենք Ա. Ղազիյանի թարգմանչական գործունեությունը: 1988 թ. տպագրվել է նրա ռուսերենից թարգմանած «Աֆորիզմներ» ստվարածավալ (702 էջ) և 1998-ին՝ Լ. Մելիք-Շահնազարյանի «Ադրբեջանի ռազմական հանցագործությունները Լեռնային Ղարաբաղի հանրապետության խաղաղ բնակչության դեմ» փաստագրական ժողովածուները:

Եվ սա դեռ բոլորը չէ: Ա. Ղազիյանը տասնյակ ու տասնյակ բանագիտական, պատմագիտական հոդվածների հեղինակ է, որոնցով նա արձագանքել է օրախնդիր հարցերի՝ շրջանառության մեջ դնելով բազմաթիվ կարևոր փաստեր, գիտական օբյեկտիվության չափանիշներով ազատելով դրանք թյուր մեկնաբանություններից:

Այո, հայ բանագիտության ավագ սերնդի լավագույն ներկայացուցիչներից մեկը՝ Ալվարդ Ղազիյանը, 85 տարեկան է: Մովորաբար տարիքի հետ նկատվում է աշխատունակության թուլացում: Բայց, ինչպես ասում են, սա այն դեպքը չէ: Առողջական խնդիրներ ունեցող և տասնվեց թոռան ու ծոռան տեր մեծ մայրիկ Ալվարդ Ղազիյանը շարունակում է իր արդյունավետ գործունեությունը՝ լույս ընծայելով բանահյուսական, պատմաազգագրական, հրապարակախոսական աշխատանքներ, որի հերթական վառ վկայությունն է վերջերս հրատարակված «Արևմտահայոց պայքարի Արցախի զավակները» մենագրությունը (2015 թ., 252 էջ): Նախանձելի կամք, եռանդ ու աշխատասիրություն՝ հանուն մեր ինքնության պահպանման հայրենանվեր գործի:

ԱԼԵՔՍԱՆԴԻ ՄԱՆԱՍՅԱՆ

Խմբագրության կողմից

Խմբագրական խորհրդի հետ ի սրտե շնորհավորում ենք վաստակաշատ բանագետ Ալվարդ Ղազիյանին հոբելյանի առթիվ և մաղթում առողջություն ու կորով իր գիտական մտահղացումներն իրականացնելու ճանապարհին: